# ՍԻՍԻԱՆԻ ՇՐՋԱՆ

## ՍԻՍԻԱՆ (ՂԱՐԱՔԻԼԻՍԱ)

*Այժմյան համանուն շրջանի շրջկենտրոնն է։*

*Հնում Ծղուկ գավառի մեջ էր մտնում և ամբողջ Սյունիքի իշխանական նստոցն էր։ Սիսիան և Ղարաքիլիսա անունները նոր են. գյուղի հին անունը եղել է Ծաղկա։ Ինչպես գյուղի, այնպես էլ գավառի Ծղուկ անունը Ստ. Օրբելյանը ծագած է համարում «ի Ծղկայ դաստապետէ»[1], որը հնարովի է։ Գյուղի հյուսիս-արևմտյան ծայրին մի բարձրադիր սարահարթի վրա կանգնած է 6—7-րդ դարերի ճարտարապետական լավագույն գործերից մեկը, խաչաձև և կենտրոնագմբեթ մի եկեղեցի, ըստ ամենայնի նման Հռիփսիմեի տաճարին։*

*Ինչպես գյուղի, այնպես էլ եկեղեցու հին անունները մոռացվել են. վերջին դարերում և այժմ եկեղեցին կոչվում է ս. Հովհաննես. բայց նրա պատերին եղած հնագույն արձանագրությունները, որոնց մեծ մասը հրատարակված չեն, ճշտորեն պարզում են այդ նշանավոր հուշարձանի անունը, նաև գյուղի նախկին դերն ու նշանակությունը։*

*Արձանագրություններից երկու հնագույնների մեջ (№ 241, 246) եկեղեցին կոչված է ս. Գրիգոր, իսկ մեկ ուրիշի մեջ՝ «Սինի (Սյունի) վանից եկեղեցի», այս անունները իմաստավորվում են Ստ. Օրբելյանի նկարագրությամբ։ Պատմաբանը Սյունյաց աշխարհի նշանավոր եկեղեցիների և վանքերի շարակարգության մեջ (Գլ. ԿԲ), Տաթևի և Թանահատի վանքից հետո երրորդի մասին գրում է. «Սիւնի վանք որոյ եկեղեցին չքնաղ և նորակերտ ձևով կանգնեալ գմբէթայարկ խորան երկնանման, ի մեծ բարեպաշտուհւոյն Վարազդխտոյ՝ Սիւնեաց տիկնոջէ յառաջ քան զհայ թուականն, յանուն սրբոյ Լուսաւորչին։ Եւ առաջև վանացն ի մէջ քաղաքահայեաց* Մէյդանին *դնեն իշխանքն տուն արքունի և ապարանք իշխանանիստ...»[2]։*

*Պատմագրի այն խոսքերը, որ եկեղեցին շինվել է «յառաջ քան զհայ թուականն» իհարկե չեն վերաբերում ներկայումս կանգուն շենքին։ Այդ հնագույնը կարող էր լինել բազիլիկ շենք. ժողովրդի մեջ մնացած հիշողության հիման վրա Օրբելյանը այդ խոսքերով նրա հիմնադրման հնությունն է միայն շեշտում։ Ներկա կենտրոնագմբեթ շենքը իր ճարտարապետական առանձնահատկություններով վերաբերում է այդ տիպի վաղագույն հուշարձանների խմբին և ամենայն հավանականությամբ 6-րդ դարի վերջերի գործ է։*

### ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Այստեղ ամփոփված **33** արձանագրություններից հրատարակված են միայն **10**-ը։ Արձանագրություններից երկու խումբ հատկապես կարևոր են։* Ա. Խումբ. *դրանք թեև անթվական, բայց հայերեն գրչագրության հնագույն նմուշներից են և վերաբերում են 6-րդ դարին, այդ բանին ապացույց են նախ՝ նրանց տեղադրությունը, գրված են բարձր քիվերի նեղ շրթունքներին, շինության ընթացքում պատերի մեջ հատկապես ագուցված այն բարձրաքանդակների տակերին, որոնք պատկերում են շինարարությունը հովանավորող և ղեկավարող անձանց։ Գրչագրական տեսակետից պատկանում են հնագույն բոլորաձև երկաթագրի ոճին և վերջապես նրանց մեջ երևան եկող անունները և նրանց գրության ձևերը կապվում են հայոց մեջ գործածական հնագույն անուններին և հնչական առանձնահատկություններին։ Այս խմբին են վերաբերում անվիճելիորեն № **242, 243, 244, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253** արձանագրությունները։*

---

[1] Ստ. Օրբելյան, *12*։

[2] *Անդ, 338*։

[3] Ստ. Օրբելյան, *էջ 12*։

Բ. խումբ. սրանք արժեքավոր են նրանով, որ գրված են ոչ թե վաղօրոք կազմած և մասնագետ փորագրողի ձեռքով, այլ հանպատրաստից և իրենց՝ հիշատակագրության տերերի կողմից, մետաղի կտորի սուր ծայրով, հասարակ խազերով։ Դրանցից մեկը՝ № 260, նույնիսկ պատանի իշխանազուն Սահակիկի ձեռքով՝ 1017 թ.։ Այս խմբին են վերաբերում 257, 2․8, 259, 260 արձանագրությունները։

## ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Այս նշանները ճարտարապետության պատմության համար կարևոր նշանակություն ունեն աշխատավարձի որոշման, որևէ շենքի վրա աշխատած որակավոր վարպետների թվի, նույն վարպետների տարբեր շենքերի վրա աշխատած լինելու և նույնիսկ անորոշ թվականով շենքերի ժամանակը որոշելու համար, երբ նույն վարպետի նշանը երևան է գալիս թվագրված և չթվագրված շենքերի վրա։

Վարպետների նշաններն ունեն արձանագրական և կուլտուրական նշանակություն. նշանների մեծ մասը տառեր են, որոնք անկասկած վարպետների անունների սկզբնատառերն են. Սյունի վանքի 39 նշաններից 20-ը հայերեն տառեր են. դրանց մի մասը շրջագիր է, որն ապացույց է, թե նույն անունով երկու վարպետներ են աշխատել, որոնցից մեկը իր անվան սկզբնատառը շրջված է գրել՝ մյուսի հետ չշփոթվելու համար։

Մնացած նշանների մեծ մասը, բացի 2—3 հատից, որոնք զուտ զարդանշաններ են, նույնպես հնչական կամ իմաստային նշանակություն ունեն և կարող են կուլտուրական այլ տեսանկյունով հետաքրքիր լինել. նրանց մեջ կարելի է գտնել հունարեն տառեր, օրինակներ «հայկական գաղափարագրերի» կամ «իմաստոնց նշանների» և որ ավելի հետաքրքիր է երկու երեք նշան համեմատելի են նորագյուտ Աղվանից տառերի հետ. այդպիսիններն են մեր ցանկի № 26, 27 և 32 նշանները, որոնք այդ այբուբենի Կ, Խ. և Պ տառերին են նման[1]։

Իսկ որևէ հուշարձանի պատմությունն ուսումնասիրելու համար վարպետների նշանների դերը կարող է երբեմն չափազանց մեծ լինել, օրինակ հենց Սիսիանի այս հուշարձանը դեռևս հատուկ ուսումնասիրության չի ենթարկվել։ Նկատի ունենալով Օրբելյանի հաղորդածը նրա կառուցման ժամանակի մասին,—«յառաջ քան զհայ թուականն», կարծիք է հայտնվել, որ ներկա շենքի եռաստիճան հիմքը պատկանում է ավելի հնոտգույն, հավանաբար բազիլիկ մի շենքի. բայց վարպետների նշաններից № 3 և 31-ը փորագրված են ինչպես հիմքի աստիճանների, այնպես էլ պատերի և նույնիսկ գմբեթի վրա։ Միայն այս փաստը բավական է ապացուցելու համար, որ ներկա շենքն, իր եռաստիճան հիմքով, շինվել է միաժամանակ և վարպետների նույն խմբի ձեռքով։

**241. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *կաուրի եյուսաի հարավային և արևմտյան քիվերի վրա. 1 տ.*

ՍՈՒՐԲԳՐԻԳՈՐՈՂՈՐՄԵԱՅ
ԳՐԻԳՈՐԻՍԻՒՆԻՈՅԵՒԿՈՐՈՒՍԵԱԼՌՈՍՏՈՄՈՅ

**ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՈՂՈՐՄԵԱՅ ¦ ԳՐԻԳՈՐԻ ՍԻՒՆԻՈՅ ԵՒ**
**ԿՈՐՈՒՍԵԱԼ ՌՈՍՏՈՄՈՅ.**

*Ղալայան, Գ., 188.*
*Լուսանկ. ատխա. XXIII, 84 (մի մասը միայն)*

---

[1] *А. Шанидзе*—Новооткрытый алфавит Кавказских албанцев и его значение для науки, стр. 29. Тбилиси, 1938.

**242. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *գմբեթի չորս կողմերում ագուցված բարձրաքանդակների տակերին.*



ՄԱՐԿՈՍ. ՄԱԹԷՈՍ.
ՅՈՎԱՆԷՍ. ՂՈՒԿԱՍ.

**243. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևմտյան պատի հարավային մասում. բարձրաքանդակի կողքին. 2 տ.*



ՅՈՀԱ՛ՆԷՍ | ԵԿԵՂՑԵՊԱՆ.

*Լուսանկ. տախտ.* XXIII, 85

**244. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևմտյան պատի հարավային խորշի պատին. 4 տ.*



ԱԾ ՄԱՐԴԱՍ|ԷՐ ՑԻՇԵԱՑ | ԱՇԱԿԻ ԳՐԻ|ԳՈՐԵԱՆ.

*Լուսանկ. տախտ.* XXIII, 86

**245. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *վերոհիշյալի անմիջական տակին. մանրատառ. 1 տ.*



ՑԻՇԵԱՑ, Ի ԹՎ. :Ռ: ԵԻ :Զ:

*Լուսանկ. տախտ.* XXIII, 86

**246. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. հարավային պատի արևելյան մասի ներքևում. 4 տ.*



ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ | ՈՂՈՐՄԵԱ ԱՐ|ՏԱՎԱՆԱՑ ԳՈՐԾԻՎ | ԵՐԱՑԻ.

*Լուսանկ. տախտ.* XXIII, 87

**247. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. հարավային պատի կենտրոնական մասում. արևի ժամացույցի տակին. 1 տ.*



ԹԱՐԷՔ ԵԿԵՂԵՑՊԱՆ ԱՂԱՒԹԻՑ ԺԱՄ

*Ժամերը ցույց տվող շառավիղների ծայրերին փորագրված են Ա—ԺԲ տառերը։*

**248. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. հարավային կողմի արևելյան խորշի պատին. 2 տ.*



Ի ԹՎԱԿՈՒԹ[Ե] ԿՈՍԴԱՆ|ԴԻԱՆՈՍԻ.
ԱՊԻՐԱՏ ԳՐԵՑԻ։

249. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. ներքուստ. բեմի հյուսիսային պատի վերևի մասում. 3 տ.

ՅԻՇԻԱ
ՔՍԱԾՋԱ
Յ-ԻԿ

ՅԻՇԵԱ | ՔՍ. ԱԾ. ՋԱ|Յ-ԻԿ.

250. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. ներքուստ. բեմի հյուսիսային պատի կենտրոնում. վերոհիշյալի տակ. 5 տ.

ՅԻՇԵԱՔՍ
ԱԾ□ՎԱՐ
ԱԶՈ ՍԻՒՆ
ԵԱՑՀԱԶԱՐ
Ա ՊԵՏ

[ՅԻՇԵԱ ՔՍ. | ԱԾ. ՎԱՐ|ԱԶՈ ՍԻՒՆ|ԵԱՑ ՀԱԶԱՐ|ԱՊԵՏ.

*Երկրորդ տողի միջին մասում քառակուսի փորված է նկարի համար, որն այժմ կորած է։*

*Լալայան Գ., 189*

251. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. ներքուստ. բեմի հյուսիսային պատի ցածրի մասում. վերոհիշյալի տակին. 4 տ.

✝ ՅԻՇԵԱՔՍ
ԶՋՈՒԱՆ
ՇԵՐՇԱՔ
ԵՈՅ

ՅԻՇԵԱ ՔՍ ԶՋՈՒԱՆՇԵՐ ՇԱՔԵՈՅ.

252. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. ներքուստ. բեմի հարավային պատի ներքևի մասում. 3 տ.

ՅՈ□ՀԱՆԷ
ՍԵԿԵՂՑԵՊ
ԱՆ

ՅՈՀԱՆԷՍ ԵԿԵՂՑԵՊԱՆ.

*Առաջին տողի միջին մասում քառակուսի փորվածք է նկարի համար, որն այժմ կորած է։*

253. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. արտաքուստ հարավային պատի արևմտյան մասի կենտրոնում. արևի ժամացույցի տակին. 2 տ.

ԶԳՐՈՂԺԱՄԱՑՈՒՑԻՍՅԻՇԵՑԷՔ
ԻՄՐՈՎՔՍԱՍԷՒ+ՀԱՅՐԴԵՒԵՂԲԱՐՔ

ԶԳՐՈՂ ԺԱՄԱՑՈՒՑԻՍ ՅԻՇԵՑԷՔ |Ի ՏՐ. ՈՎ. ՔՍԱՍԷՐՔ ՀԱՅՐԴ ԵՒ ԵՂԲԱՐՔ.

*Ալիշան, 214. Լալայան, 169*

254. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. արտաքուստ. հարավային պատի արևմտյան մասի կենտրոնում. 2 տող.

ЄCΓΡЄΓΟ
ΡΓΡЄՑΗ

ԵՍ ԳՐԻԳՈ|Ր ԳՐԵՑԻ.

*Գրված է հունարեն տառերով, բացի հայերեն Ց-տառից։*

255. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ. արտաքուստ. գմբեթի հյուսիս-արևելյան կամարի կենտրոնում. 2 տ.

Շ ԵՐՈԵԱՆԻԲԱԲԵՆԻ
ՄԱՄԵԿՈՆԵԱՆ

ՇԵՐՈԵԱՆԻ ԲԱԲԵՆԻ | ՄԱՄԵԿՈՆԵԱՆ.

*Լալայան, Գ., 189*
*Լուսանկ. արխ.* XXIII. 89

**256. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևմտյան պատի հարավային մասում. 1 տ.*



ՍԲ. ԳՐԻԳՈՐ

*Գրված է շրջ. վերի մասը դեպի ձախ.*

**257. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևմտյան պատի հարավային մասում, մանրատառ և անարվեստ. 5 տ.*



ՈՎ. ՏՐՔ ԵՒ ԵՂ.ԲԱՅ Ր[Ք] ԶԻՍ ԶՍԱՀԱԿ ՀԱՅՈՑ [Յ]ԻՇԵՑԷՔ | Ի ՔՍ. ՅԻ. ՏՐ. ՄԵՐ ԵՒ ՏՐ ՅԻՇՈՂ ՅԻՇԷ.

**258. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևմտյան պատի հարավային մասում, մանրատառ և հողմահարված. 4 տ.*



:ՆԿԹ: | ԶԱՅՍ ԽԱ.ՉՍ ԲԱՐ[Ե]ԽԱՒՍ...

**259. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևելյան կողմի հյուսիսային խորշի պատին, խազած գրերով. անավարտ. 5 տ.*



ԹՎ. :ՆԿԶ: | ՍՄՊԱՏ ՈՐԴԻ ՏՆ. ԱՇՈՏՈ Ս[Ի]ՒՆ[Ե]ԱՑ ԻՇԽԱՆԱՑ | ԻՇԽԱՆԻ ՅԱՂ.Ա[Ւ]ԹՍ ԻՇԵՑԷՔ.

*Ալիշան, 214. Լալայան, Գ. 188 (ուր տեղագրությունը սխալ է նշված։*

*Լուսանկ. տախտ.* XXIII, 101

**260. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևելյան կողմի հյուսիսային խորշի մոտ. 2 տ.*



:ՆԿԶ: | ԶՍԱՀԱԿԻԿ ԻՇԵՑԷՔ.

*Լուսանկ. տախտ.* XXIII, 88

**261. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** *արտաքուստ. արևելյան կողմի հյուսիսային խորշի մոտ. մանրատառ. 1 տ.*



ԹՎ. :ՌԼԶ:



**262. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ.** *ներքուստ. ըեմի հարավային պատին. 18 տ.*

ԵՍ ՇԱՊՈՒ ԳԱ|ՐԴԱ ՊԱՏՐԻԿԱ | ՈՐԴԻ ԳՈՐ-
ՎԱ[Ց]Ի Ի ՍԵՆԻ ՎԱՆԻ|Ց ՍՈՒՐԲ ԵԿԵ[Ղ]Ե-
Ց[Ւ]Ո|[Ց]Ս ԳՆԵՑԻ Ա[ՒԳ] ՄԻՆ [ԺԱ]ՄԱՄ [ԾԱՌ]-
ՋԱՐԴԱՐ|Ի ՔԱՌԱՍ[Ն]ՈՑՆ ԵԿՐ[Ո]ՐԴ ՇԱԲԱ-
ԹԻՆ | ՀԻ[Ն]ԳՇԱԲԱԹ ԱԻՐ | . ՈՐ ԽԱՓԱՆԷ ԻՄ
ՄԵՂԱՑՆ ՊԱՐՏԱ|ԱԿԱՆ Է. ԵՍ ՏՐ ՑԱԿ|ՈՐ Ի
ՏԵՂԻՍ ԷԻ. ՈՐ|ՈՔ ԽԱՓԱՆԷ ԵԻ Զ|ՄԱՏՈՑԱՆԷ
ՑԱՌ ԵԻ Ի ՄԵՋԷ ՆԶՈՎԵ|ԱԼ ԵՂԻՑԻ.

*Լալայան, Դ. 180 (միանգամայն աղճատված և անիմաստ)*



**263. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ.** *հարավային պատի արևմայան խորշի մեջ. արտաքուստ. 7 տող.*

ԿԱՄԱԻՆ| ԱՑ. ԵՍ ՍԱՐԳԻՍ | [ԱՑ] [ԿԱՆԳՆԵՑԻ]
ԶԽԱՉՍ ԱՄՈՒ|ՍՆՈՅ ԵՒ ԶԱԻԱԿ[Ա]Ց ԻՄՈՑ,
ՅԻՇ|ԵՑԷՔ Ի ՔՍ: ՅՈՀԱՆ.

*Վերջին ՅՈՀԱՆ անունը հավանաբար գրիչին է.*

*Լուսանկ. ատխ.* XXVI, 92



**264. ՍԻՍԻԱՆ. ՍՑՈՒՆԻ ՎԱՆՔ.** *հարավային պատի արևելյան խորշի մեջ. արտաքուստ. 9 տող.*

ԿԱՄԱԻՆ ԱՑ. | ԵՍ ՎԱՐՀԱՄ | ԿԱՆԳԵԱՑ|Ի
ԶԽԱՉՍ | ԻՄ ՀԱԻՐՆ ՄՀԱԿԱՑ ԻՄ | ՄԱԻՐՆ.
ՈՐՔ | ԸՆԹԵՌՆԷՔ | ՅԻՇԵՑԷՔ.

*Թողնում ենք առանց լրացումների, ենթադրելով ոչ մասնագետ փորագրողի, այլ արձանագրության տիրոջ գրած։*

*Լուսանկ. ատխ.* XXIII, 92

Սյունի վանք. արձանագրությունները, որոնք այժմ թեև տեղում են, բայց նորոգությունների և կառուցվածքների պատճառով անընթեռնելի են։

Դմբեթի տակ կան երեք պատկերաքանդակներ, որոնց տակին արձանագրված են.

**265.** Տէր Յովսէփ Սիւնեաց եպիսկոպոս.

**266.** Թէոդորոս Սիոնի վանական.

**267.** Կոհաղաա Սիւնեաց տէր.

Լալայան, Գ. 188.

**268. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** եկեղեցու հարավ-արևմտյան խորանում դրված՝ հուշարձանից ընկած՝ քիվի մասի վրա.



ԱՆԴՐ[ԷԱՍ] . . . . . .

**269. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** եկեղեցու հարավ-արևմտյան խորանում դրված ուղղանկյուն քար, որի նեղ կողին. 3 տ.



[ՄԲ.] ԽԱՉՍ ՅԱՆՈՒՆ [ՍՐ]ԲՈՑ ՓՐԿՉԻՆ ՏՆ. ՄԵՐՈՑ ՑԻ. ՔԻ. ՈՐԴԻ ԱՑ.

Սկզբի երկու տողերի վերջավորությունները կոտրված են։ Նախնական վայրն անհայտ է, բայց հուշարձանի շրջապատից չէ, որովհետև կոթող-խաչքարի պատվանդանի մաս է, որպիսին Սիսիան գյուղում չկա այժմ։

**270. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ.** ներքուստ հյուսիսային պատի մեջ ուշ ժամանակ ագուցված մարմարե սալի վրա. 4 տ.



ՍԱԿՍ.ՑՆ ՓՈԽՄԵՑԱՒ ԱՌ ՏՐ | Ի :Ռ: ԵՐԿՀԱՐԻՒՐՍ ·ԲՍԱՄՆ ԵՒ | ԸՆԴ ՆՄԻՆ ԵՒ ՎԵՑ ԷՐ ԹՎԱԿԱՆ ; ՁՏԱՊԱՆ ԱՐՀՈՑ ՄԵՐ ՇԻՆՈՂ.

Արձանագրությունը միջին մասն է, սկզբի և վերջի մասերը այլ քարերի վրա պիտի լինեին։



**271. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔԻ ԲԱԿ.** արևմըայն կողմում ընկած խաչքարի բեկորի տակին. 7 տ.

ԹՎ. | :ՋԾՉ: | ԵՍ ԱՄԻՐԲԷԿՍ ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԷՉՍ ՑԻՇԱՏԱԿ ՀԱՒՐ | ԻՄ ԷՀԱՆԻՍԻ, ԵՂԲԱՐ ԻՄ ԹԱԹԱՐԻՆ. ՈՎ ԿԱՐԴԷՔ.

Տեղ չլինելու պատճառով վերջից մի երկու բառ թերի է թողնված։

272. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔԻ ԲԱԿ տապանաքարի վրա. 2 տ.



ԵՍ ՆԻԿՈՂԱՈՍ ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՍ ⌜ՄԱՐ⌝
ՏՐՈՍԻՆ ԵՒ ՀՈԳՒՈՅ ԻՄՈՅ. ԹՎ. ։ՌԻԳ։

Լուսանկ. տախտ. XXIV, 93

273. ՍԻՍԻԱՆ. ՍՅՈՒՆԻ ՎԱՆՔ. եկեղեցու դրսից և ներսից երեսպատման քարերի վրա փորագրված վարպետների նշանները:



Համար 1. Գործածված է 17 անգամ. հարավային պատին՝ 2 (մեկը գլխիվայր). Արևմտյան պատին՝ 2. հյուսիսային պատին՝ 3. արևելյան պատին՝ 3 (մեկը գլխիվայր). գմբեթի վրա՝ 6 (երեքը գլխիվայր). ներսում՝ 1 անգամ:

Համար 2. Գործածված է 17 անգամ. հարավային պատին՝ 4 (մեկը գլխիվայր և մեկը կողքանց). արևմտյան պատին՝ 2 (երկուսն էլ գլխիվայր). հյուսիսային պատին՝ 5 (մեկը գլխիվայր, մեկը կողքանց). արևելյան պատին՝ 2. ներսում՝ 3. հարավ արևմտյան խորան՝ 1 անգամ:

Համար 3. Գործածված է 39 անգամ. հարավային պատին՝ 5 (մեկը գլխիվայր) արևմտյան պատին՝ 4. հյուսիսային պատին՝ 12 (մեկը գլխիվայր). արևելյան պատին՝ 5 (մեկը թեք). գմբեթի վրա՝ 2 (մեկը գլխիվայր). եռաստիճան հիմքի Գ. աստիճանի վրա, հարավային կողմից՝ 3. ներսում՝ 8 անգամ:

Համար 4. Գործածված է 5 անգամ. հարավային պատին՝ 1. հյուսիսային պատին՝ 1. գմբեթի վրա՝ 3 անգամ:
Սա անշուշտ համար 3 նշանն է՝ շրջված:

Համար 5. Գործածված է 6 անգամ: Հյուսիսային պատին՝ 2. արևելյան պատին՝ 2. գմբեթի վրա՝ 1. ներսում՝ 1 անգամ:

Համար 6. Գործածված է 4 անգամ: Հյուսիսային պատին՝ 2. ներսում՝ 2 անգամ:
Սա անշուշտ համար 5 նշանն է՝ շրջված:

Համար 7. Գործածված է մեկ անգամ. ներսում:

Համար 8. Գործածված է 44 անգամ: Հարավային պատին՝ 7 (երկուսը գլխիվայր). արևմտյան պատին՝ 4 (երկուսը գլխիվայր). հյուսիսային պատին՝ 15 (մեկը գլխիվայր). արևելյան պատին՝ 6. ներսում՝ 10. հարավ-արևելյան խորանում՝ 1. հարավ-արևմտյան խորանում՝ 1 անգամ:

Համար 9. Գործածված է 21 անգամ։ Հարավային պատին՝ 4 (մեկը գլխիվայր). հյուսիսային պատին՝ 10. արևելյան պատին 1 (գլխիվայր). ներսում՝ 4. հյուսիս-արևմտյան խորանում՝ 1 անգամ։

Համար 10. Գործածված է 5 անգամ։ Հարավային պատին՝ 2. հյուսիսային պատին՝ 2 (շրջած). արևելյան պատին՝ 1 անգամ։

Համար 11. Գործածված է մեկ անգամ։ Հյուսիսային պատին.

Համար 12. Գործածված է 3 անգամ։ Արևելյան պատին՝ 3 (մեկը կողքանց)։

Համար 13. Գործածված է 2 անգամ։ Հարավային պատին՝ 1 (գլխիվայր). հարավ-արևմտյան խորանում՝ 1 անգամ։

Համար 14. Գործածված է մեկ անգամ։ Հարավ-արևելյան խորանում։

Համար 15. Գործածված է 13 անգամ։ Հարավային պատին՝ 1. հյուսիսային պատին՝ 3. արևելյան պատին՝ 3. գմբեթի վրա՝ 1. ներսում՝ 5 անգամ։

Համար 16. Գործածված է 47 անգամ։ Հարավային պատին՝ 5. արևմտյան պատին՝ 3. հյուսիսային պատին՝ 6. արևելյան պատին՝ 7. ներսում՝ 18. հարավա-արևելյան խորանում՝ 7. հյուսիս-արևմտյան խորանում՝ 1 անգամ։

Համար 17. Գործածված է 3 անգամ։ Հարավային պատին՝ 1. ներսում՝ 1. հյուսիս-արևմտյան խորանում՝ 1 անգամ (գլխիվայր)։

Համար 18. Գործածված է 1 անգամ, արևմտյան պատի վրա.
Հազվագյուտ երևույթ է մի քարի վրա երկու նշանի գործածությունը։

Համար 19. Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատի վրա.
Նույնպես հազվագեպ երևույթ է։

Համար 20. Գործածված է մեկ անգամ, հարավ-արևելյան խորանի ներսում, հարավային պատի կենտրոնական մասում. փակագիր է, հավանաբար՝ ԱԲԳԱՐ։

Համար 21. Գործածված է մեկ անգամ, եկեղեցու ներսում։

Համար 22. Գործածված է մեկ անգամ, եկեղեցու ներսում։

Համար 23. Գործածված է մեկ անգամ, եկեղեցու ներսում։

Համար 24. Գործածված է 2 անգամ, գմբեթի վրա՝ 1. հարավ-արևելյան խորանում մեկ անգամ։

Համար 25. Գործածված է 2 անգամ, գմբեթի վրա։

Համար 26. *Գործածված է 3 անգամ, գմբեթի վրա (մեկը գլխիվայր)։*

Համար 27. *Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։*

Համար 28. *Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։*

Համար 29. *Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։*

Համար 30. *Գործածված է մեկ անգամ, արևելյան պատի վրա։*

Համար 31. *Գործածված է 17 անգամ։ Հարավային պատին՝ 3 (մեկը գլխիվայր). հյուսիսային պատին՝ 2 (մեկը կրկնակի մեծ) գմբեթի վրա 2 (մեկը գլխիվայր). եռաստիճան հիմքի Ա. աստիճանի վրա՝ 2. ներսում՝ 7 (մեկը գլխիվայր). հյուսիս-արևելյան խորանում 1 անգամ (կողքանց)։*

Համար 32. *Գործածված է մեկ անգամ, գմբեթի վրա։*

Համար 33. *Գործածված է 3 անգամ։ Հարավային պատին՝ 1. արևմտյան պատին՝ 1. հարավ-արևելյան խորանում՝ 1 անգամ։*

Համար 34. *Գործածված է 6 անգամ։ Հարավային պատին՝ 3. արևելյան պատին՝ 3 անգամ։*

Համար 35. *Գործածված է 10 անգամ։ Հարավային պատին՝ 1. հյուսիսային պատին՝ 7 (մեկի միջին գծերը ուռուցիկ և եզրերը անկյունով դրված). ներսում՝ 2 (մեկը պատուհանը փակող քարի վրա).*

Համար 36. *Գործածված է մեկ անգամ, հարավ-արևելյան խորանում։*

Համար 37. *Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատին։*

Համար 38. *Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատի վրա։*

Համար 39. *Գործածված է մեկ անգամ, հյուսիսային պատի վրա։*

## ԹԱՆԱՏԱՑ ՎԱՆՔ

*Ստ. Օրբելյանը Սյունյաց նահանգի վանքերի թվարկության մեջ հիշատակում է երկու նույնանուն վանքեր. մեկը Ծղուկ գավառում, մյուսը՝ Վայոց ձորում։ Վերջինիս տեղը լավ հայտնի է. այն գտնվում է այժմյան Եղեգնաձորի շրջանի Վերնաշեն և Մալիշկա գյուղերի արանքում և կոչվում է Ղարա-վանք, որի ղույգ եկեղեցիներից մեկը կոչվում է ս. Ստեփանոս և մյուսը՝ ս. Նշան. հուշարձանի բոլոր շենքերը կառուցված են 13-րդ դարում՝ Պռոշյանների կողմից։*

*Մյուս, հնագույն Թանահատի վանքը, որը գտնվելիս է եղել Ծղուկ գավառի մեջ, և որը Տաթևից հետո երկրորդն է հիշատակված պատմագրի ցուցակի մեջ և անվանված «մեծ առաքինարան», մինչև վերջին տասնամյակները մնացել էր անհայտության մեջ։*

*Հուշարձանի անհայտությունը և ինչպես Օրբելյանի, այնպես էլ հետագա աղբյուրների*